

Փրկիչ հաղորդիչ

Առավուտը սկսվում է ոչ թե սուրճից, այլ ամբողջ մարմինը խոցող ու մինչև ոսկորների ուղեղը հասնող գլխացավից: Չնայած՝ «առավուտ» հասկացությունը բավականին վիճելի էր, որովհետև եզրակացությունը արված էր սենյակը ուղիղ մեջտեղից կիսող եւ իր խոչընդոտը լիկվիդացնելու նպատակով լույսի շողի ոտնձգություններով:

Լռություն: Այն կարծես հեղուկի նման լցվել էր դռան բանալու անցքից, հեղեղել, կուլ տվել ամեն տեսակի մեծ աղմուկը, անարդար պայթար մղել նույնիսկ ամենաաննշմար ճանճի տզզոցի հետ եւ նրան նույնպես կուլ տվել: Սակայն ականջները ճշող լռության կործանումն եկավ այն ժամանակ, երբ սենյակի մեջ կայծակի նման արագ եւ հստակ լսվեց գանգուր հրդեհի հարձակումներին չդիմացած մազակալի վերջին ճիչը: «Պճճ»... ու վերջ, չդիմացավ նաեւ այս փոքրիկ հոգին (իմիջայլոց, այս ամսվա մեջ արդեն չորրորդն էր):

Գլխի վրայի տարօրինակ թեթեւության եւ միաժամանակ անտանելի գլխացավի միացությունը ստիպեց պաղ հատակին երկու ոտք-մեկ ձեռք շինարանությունը փռածին բացել աչքերն ու կտրուկ հետ փակել լույսի անհեթեթ արկածներից: Արմունկների վրա բարձրանալով՝ Լիդան հասկացավ, որ ապրած 29 տարիները իմացություն են տալիս ցավող հոդերի ու խմելու ունակության բացարձակ բացակայության տեսքով: Եվ, եթե առաջին պատճառի հետ դեռ քիչ թե շատ ամեն ինչ հասկանալի է (ինչպիսի անհեթեթություն, ես դեռ լի եմ էներգիայով), ապա երկրորդը նույնիսկ ամոթ էր բարցրածայնել: Նույնիսկ համալսարանն ու լավ աշխատանքը քննչականում չնպաստեցին գոնե ավիոհոլին դիմադրելու չնչին կարողությանը, եւ մարդն, ով հանդիսանում էր վարչության պետ մեծ կազմակերպությունում, արդյունքում հարբում էր մի բաժակ գինուց: Միգուցե դա էլ իր դրական կողմերը ունի, ո՞վ գիտի:

Առաջինը, ինչը նկատեց Լիդան խանգարող վարսերը հետ տանելուց հետո, տարածքի բացարձակ օտարությունն էր: Աստված գիտի, թե որտեղ է ինքը, եւ, ինչը ավելի հետաքրքիր է, ոնց է հայտնվել: Դատարկ փողոցներ, մառախուղ, ես արթնացա իմ գոռոցից:

Սթոխեսում ոչ մեկն արտակարգ իրավիճակը լուրջ չէր ընդունում: Մարդկանց պետք էր գումար հաց գնելու եւ մի գլուխ ընտանիք պահելու համար: Ոմանք փնտրում էին աշխատանք, ոմանք բոլոր վերջույթներով բռնվում էին արդեն պատրաստի հնարավորությունից: Ուստի ոչ մեկի համար զարմանալի չէին դեպի մոխրագույն-սեւ բարձրահարկեր ուղված հերթերը: Իր վերջին հաջող դատական գործի համար (փայլուն արդյունք, իսկը իր նման), Լիդային սպասում էր պաշտոնի բարձրացում, նոր աշխատատեղի, սեփական քարտուղար (մի համեստ աղջիկ, մնացածների նման չէ) եւ ամենակարեւորը՝ հնարավորություն: Չնարավորություն՝ ավելի, մի քիչ, մի խազ ավելի մոտ լինել իր պաշտելի նախկին դասախոսին, որը հանդիսանում էր նաեւ իր նոր շեֆը:

Դեռ ավագ դպրոցից Լիդան զգացմունքներ ուներ (ոչ մի սեր) նրա նկատմամբ: Հետեւելով մեծ մարդու օրինակին՝ որոշել էր պայքարել: Ինչպե՞ս մենք հասանք սրան: Ակնկալում էր արդյոք Լիդան, որ համաճարակի ամենաթեժ պահին կհայտնվի իր (համարյա իր) նոր աշխատանքի բանակցությունների եւ չափից շատ կարեւոր հյուրերի հանդիպումների սենյակում: Ոչ: Արդյոք գիտի՞ նա իր հետագա գործողությունների ընթացքը: Ոչ: Նորածնի անօգնականություն: Այն, ինչից նա բուլոր 29 տարիները վախեցել էր, հիմա գլխով ծածկում ու խեղդում է նրան: Մոխրագույն, կեղծ ժպիտներով նախշված դիպլոմներով լի պատերը սկսում են նեղանալ, օդը կամաց- կամաց խտանում է, եւ միակ բանը, որը մնում է աղջկան անել, աղոթելն է: Բայց ու՞մ: - Կլաուստրաֆոբիա, գրողը քեզ տանի:

Խորը շունչ, աչքերը փակ, դանդաղ հաշվում ենք մինչեւ տասը, բացում ենք աչքերը: Հայացքը անհանգստորեն փնտրում է այն ձողիկը, որից կարելի է բռնվել ու փրկվել եզրավոր օվկիանոսում: Մեկ, երկու, երեք, Լիդան բարձրանում է, ուղղում ճիշդված սեւ կոստյումը, չորս, Լիդան թուլացնում է վառ կարմիր փողկապը (ինչպիսի անտանելի աքսեսուար), հինգ, վեց, հայացքը ուղղում է լույսի աղբյուրին, յոթ, ութ, եւ, օ՛ հրաշք, պատուհան: Ամբողջ պատը բաղկացած էր դրսում կատարվող անարխիայի պատճառով փոշոտված պատուհաններից:

Ութ, քայլ, ինը, երկու քայլ, ձեռքը բարձրացնում ու թեթեւ թափ է տալիս պատուհանի փոշին, որը ընկնում է կոստյումին ու կեղտոտում է ձեռքը: Լիդան չգիտի՝ ինչն է ավելի տհաճ՝ փոշու զգացողությունը մաշկի վրա, թե՞ պատուհանից բացվող տեսարանը:

16-րդ հարկից երեւում էին Տարտարի դարպասները: Ամայի փողոցներում, որտեղ խառնվում էին աշխատանքի շտապող, կամ պարզապես զբոսանքի դուրս եկած մարդկանց օձանելիքի բույրերը, այժմ միայն մանր, արագ եկող անձրեւի թարմացնող մառախուղն էր: Բավական էր հիշել 97-րդ հոդվածը 15-րդ գլխում, ինչպես կեցվածքը միանգամայն ուղղվում է: Սթոխեսի լավագույն համալսարանը, իրավագետ մագիստրոսի տիտղոսը մատիտո՞վ էին նկարած: Ինչի՞ համար էր պայքարը, չորս պատում հայտնվելուց հետո խուճապին մատնվելու՞:

-Պետք է տրամաբանել:

Սենյակի մեջտեղում դրված էր ամբողջությամբ ապակե սեղան՝ բիզնես բուկլետներն ու ժուռնալները վրան: Կաղնու մուգ փայտից պահարանը պահում էր կարծես ամեն ինչ՝ անհետաքրքիր դոսյեներից սկսած ու ծովային բրիզի հոտով մի տուփ անձեռոցիկներով վերջացած: Պատերի մոխիրը կարծես խեղդել էր սենյակը, միակ բանը, որ տարբերվում էր, հսկա, շագանակագույն փայտե դուռն էր:

Լիդան մոտեցավ դռանը հույսով, որ արտակարգ իրավիճակի հետեւանքով ավտոմատ չի փակվել: Դուռը փակ էր, ինչպես Միերի մեծ դուռը՝ խաչ դնելով աղջկա արագ դուրս գալու բուլոր հույսերին: Դուռը գոնե մի կերպ բացելու հույսով Լիդան վերցրեց սեղանի շուրջ կոկիկ դրված աթոռներից մեկը եւ, ինչքան ուժ ուներ, հարվածեց դռանը: Աթոռը գրեթե փշուր-փշուր եղավ, իսկ դուռը այդպես էլ մնաց անսթափ՝ կարծես ծիծաղելով քարացած աղջկա “ազատության” վրա: Հեշտ դուրս գալ չի ստացվի, պետք է ուրիշ տարբերակներ մտածել: Աթոռի դաժան

սպանությունից մի քանի վայրկյան հետո պատերից մեկի մոտից սկսեցին լսվել անկանոն հարվածների ձայներ:

-Ո՞նց շուտ գլխի չընկա:

Լիդան վազեց պատի մոտ, ու ինչքան ուժ ուներ՝ սկսեց հարվածել մոխրագույն հարթությանն ու գոռալ: -Մարդ կա՞, ինչ-որ մեկը, օգնեցե՛ք:

Կոկորդի վերելի հատվածը սկսեց ցավել, ուժերը կամաց-կամաց սկսեցին լքել: Իզուր վատնած ժամանակ, եւ, ամենակարեւորը, ոչ մի արձագանք: Միզուցե լսվե՞ց: Պետք էր բացել անիծված դուռը, ուրիշ տարբերակ չկար: Մտորումների հետ միարժամանակ՝ աղջիկը մեխանիկորեն ձեռքերը տարավ կոստյումի գրպաններն ու ինչ-որ սառը իր շոշափեց: Արագորեն գրպանից հանելով եւ դնելով անհայտ “իրը” սեղանին՝ նրա առջեւ հանգրվանեց նարնջագույն կոթով գրպանի դանակ:

Լիդայի աչքերը մեծացան, ձեռքերը սկսեցին դողալ: Որտեղի՞ց նրա գրպանում դանակ, միզուցե կողքի սենյակում գտնվո՞ղն է դրել, իսկ արդյոք այնտեղ մարդ կա՞: Նա նստեց առաջին պատահած աթոռին, թափ տվեց գլուխն ու սկսեց մտածել: Հայացքն ընկավ ապակե հսկա սեղանի վրա, եւ նույն պահին գլուխն այցելեց խենթ, չէ՛, ապշելու աստիճան խենթ միտք:
-Եթե դուռը չի բացվում ինքնակամ, ես կբացեմ այն:

Ըհն, սկսվեցին մենախոսությունները: Պետք է լավ մտածել, հետեւանքները կարող են վտանգավոր լինել: Դուռը ավտոմատ էր, չուներ կողպեք, բայց կարելի էր ապակու կտորով անցքը բացել եւ մի փոքր ուժի օգնությամբ դուրս գալ: Գլխում հեռանկարը հավաքելուց հետո Լիդան վերցրեց ողջ մնացած աթոռներից մեկը (հույս ունեի՞ք գոյատևելու) եւ նախապես մի քանի քայլ հետ գնալուց հետո ամբողջ ուժով հարվածեց ապակե սեղանին: Հարթ մակերեսային վրա նույն պահին գոյացան բազում մեծ եւ փոքր ճաքեր, իսկ աթոռի ոտիկներից մեկը անհույս կտորվեց: Հարկավոր էր եւս մեկ հարված, եւ այս անգամ աղջիկն արդեն հարվածի ուժգնությունը ապահովելու համար սեղանի դիմացից տուժած աթոռի մնացորդներով արեց անսպասելի հզոր հարված: Ապակին փշրվեց եւ թռավ չորսբլուրը՝ կտրատելով ամեն ինչ իր ճանապարհին: Լիդայի ձեռքերը բացառություն չէին:

Անզգուշության հետեւանքները դեռ երկար կմնան նրա մաշկին դաջված բարակ սպիերի ձեւով: Արյան կարմիր, ալ ծաղկի թերթերի նման նուրբ կաթիլները ծաղկեցին նրա դաստակներին: Արյան յուրօրինակ հոտը խփեց աղջկա քթին, պատկերը սկսեց մթնել, ոտքերը թուլացան, եւ Լիդան ուժասպառ ընկավ ուղիղ ապակե փոշու մեջ:

-Լի՛դա, Լի՛դա Նենսի Սոյուլարտ, հենց հիմա արի տուն:

Չեփյուռը փչում է դեմքին՝ խաղալով մազերը կապող կապույտ ժապավենի հետ եւ գնալով: Դաշտի նոր-նոր բացված խատուտիկները խուտուտ էին տալիս ոտքերը, եւ Լիդան, չուզենալով է՛լ ավելի բարկացնել մորը, գնաց տուն:

-Էլի տևից հեռու էիր գնացել, բա որ մի բան պատահեր: Աստված գիտի, ինչեր են կատարվում մեր քաղաքում,- սեղանին նոր եփված կոլուակով ապուրը դնելով՝ փնթփնթում էր միջին տարիքի բարձրահասակ կինը:

-Մամ, հերիք ա, ես մեղավոր չեմ: Այնտեղի դաշտը նենց սիրուն էր...

-Բավական է: Լիդա, աղջիկս, դու պետք է սովորես պատասխան տալ քո արարքների համար եւ լինել պատասխանատու: Օրինակ, դաշտը քեզ համոզում էր, որ դու գնաս, պառկես խոտերի մեջ ու Էլի կեղտոտես քո նոր լվացած վերնաշապիկը: Սենյակում պողպատե գդալի գրնգոցի հետ համահունչ լավեց աղջկա բարձր ծիծաղը:

-Չէ, մամ, ի՞նչ ես, է, խոսում: Համ էլ՝ Էդքան Էլ կեղտոտ չի, ոչինչ:

-Աղջիկ ջան, դու ինձ լրիվ քայլող լվացքի մեքենայի տեղ ես դրել: Նորից լավեց գրնգուն ծիծաղը, ուղղակի՝ արդեն հագոցներով: Աղջկան ջուր տալուց հետո Լիդայի մայրը մոտեցավ նրան, հավաքեց մազերն ու շշնջաց ականջին:

-Դու ուժեղ աղջիկ ես, պայքարի միևնույն վերջ:

-Մամ,- վեր թռավ Լիդան:

Նա հիմա գտնվում էր անիծված սենյակում, ավելին՝ պառկած էր ապակիների մեջ: Մինչ նա ուզում էր վեր կենալ, պատի մոտից կրկին լավեցին դմփոմփոցներ: Արագ վեր կենալով եւ կոստյումի վրայից ապակու փշուրները թափ տալուց հետո՝ Լիդան վազեց դեպի պատը եւ սկսեց պատասխան հարվածներ հասցնել:

-Լսում եք, դուք ինձ լսում եք: Ես գիտեմ ոնց դուրս գալ այստեղից, դուք ուղղակի փորձեք մնալ կապի մեջ, լավ:

Պատասխանը չհաջորդեց: Միակ բանը, որը հաջորդեց աղջկա կապ հաստատելու փորձին, մի քանի դմփոցները, ապա ուժեղ չոր հագի ձայներն ու լռությունն էին:

Օ՛, ոչ: Հարեւանը կարող է լինել վարակված, պետք է հասկանալ ոնց չվարակվել եւ միաժամանակ օգնել նրան: Իսկ, արդյոք, պե՞տք է այսքան ջանք թափել ինչ-որ մեկին փրկելու համար: Առավել եւս՝ ինքը կարող էր այս ամենի հեղինակը լինել: Չէ՛, հարեւանի օգնությունը կարող է օգտակար լինել ցուցումներ տալու ժամանակ: Վերջիվերջո, սա արդեն քրեական գործ է:

Սիրելի աշխատանքի մասին մտքերը ժպիտ առաջացրեցին աղջկա դեմքին, եւ միայն դրանից հետո նկատեց արյունոտված ձեռքերը: Վերքերը խորը չէին, բայց ամեն դեպքում հիշեցնում էին իրենց գոյության մասին: Վիրակապի կարիք կար: Լիդան մոտեցավ մեծ պահարանին եւ սկսեց փորփրել այն պիտանի որեւէ բան գտնելու նպատակով: Ջրի անգամ հետք չկար, բայց անձեռնոցիկները կարող էին օգտակար լինել: Թղթերից բացի նա գտավ նաեւ երկու հատ ընկույզով կոնֆետ, մատիտ եւ մի մեծ շիշ արժեքավոր կոնյակ:

-Կոռուպցիան երբեմն կարող է օգտակար լինել:

Սկզբից անձեռնոցիկների օգնությամբ մի կերպ մաքրեց արդեն կտրվող արյունը, հետո, ավրհոյի շիշը բացելով, ոսկեգույն, շատ քիչ թանձր հեղուկը բարակ շիթով լցրեց ձեռքի վրա: Ինչպես եւ սպասվում էր, վերքերը սկսվեցին վառվել, բայց Լիդան աստամները սեղմած դիմանում էր: Մի քանի անձեռնոցիկ ձեռքին դնելուց հետո հասկացավ, որ ձեռքը պետք էր կապել:

Եվ այստեղ եկավ անտանելի փողկապի տրիումֆը: Արձակելով կարմիր դահճին՝ աղջիկը ձիգ կապեց այն դաստակի երկայնքով եւ վիրաբուժությունը վերջացնելուց հետո միանգամից զգաց, որ անտանելի քաղցած է: Ամբողջ սենյակով լսվեց ստամոքսի գռգռացող, կարծես ոռնացող հստակ ձայնը: Արագորեն հանելով հայթաայթած կոնֆետներից մեկը՝ Լիդան ազատվեց գունավոր ստվարաթղթից եւ ազահորեն կերավ քաղցրավենիքը, որը, իդեպ, այդքան էլ համեղ չէր (ո՞ւմ է ընդհանրապես դուր գալիս դառն շոկոլադը), եւ արդեն ձեռքը տարել էր մյուս կոնֆետի հետեւից, երբ կանգ առավ: Աստված գիտի, թե ինչքան է մնալու անտեր սենյակում, պետք է տնտեսել: Բացված բրենդիից մի կուլ անելուց, դառնությունից խեղդվելուց հետո Լիդան մոտեցավ հատակին, վերցրեց հարմար հաստության ապակու կտոր ու մոտեցավ խորհրդավոր դռանը: Նեղ անցքի մոտ ապակին հարմարեցնելուց հետո աղջիկը կոպիտ շարժումով վերեւ տարավ ապակե կտորը, ինչի արդյունքում այն կտրվեց:

-Գրողը տանի, հաստ է:

Չհամապատասխանող կտորը դեն շարտելով՝ նա մոտեցավ սեղանի խառնաշփոթին, աչքերով երկար փնտրեց եւ վերցրեց ավելի համար կտոր: Այս անգամ ապակին անհամեմատ հեշտ մտավ անցքը: Մի քիչ տանել-բերելուց հետո Լիդան ձեռքը տարավ հետ, ապակին աշխատեց որպես լծակ եւ նեղ անցքը մեծացավ այնքան, որ կարելի էր ձեռքը մտցնել դուրս: Հաջողությունից Լիդան վեր թռավ ու իրենից գոհ սկսեց շարժումներ անել: Բայց ուրախությունն ու անկեղծ ժպիտը երկար չտևեցին: Հիշելով հարեւանի վտանգավոր լինելու մասին՝ Լիդան վերցրեց դանակը, մեծ ցավով կտրեց իր սիրելի կոստյումի թելը, թրջեց այն բրենդիով եւ կապեց դեմքին:

Դանակը ձեռքին՝ Լիդան գնաց կիսաբաց դռան մոտ ու մի փոքր ֆիզիկական ուժի օգնությամբ դուրս եկավ: Սենյակի դրսում աչքի ընկան մերկ պատերի մռայլությունն ու սառնությունը: Երկար միջանցքում լույս չկար, միայն մեջտեղից կիսաբաց դռան ետեւից էր մի կտոր լույս թափանցում: Գնալով դեպի լույսը՝ Լիդան տեսավ իր սենյակի նման սենյակ, ուղղակի ահարկու խառնաշփոթով, որի մեջտեղում, չոր հագից խեղդվելով, պառկած էր իրեն քաջ ծանոթ մեկը:

Ի՞նչ անել, եթե դիմացինը խեղդվում է: Մոտենալ, մեջքը տորրել, եթե պետք է՝ ջուր տալ: Իսկ ի՞նչ անել, եթե դիմացինը հավանաբար վարակված է անհայտ վիրուսով, իսկ դու չես կարող նրան մոտենալ ոչ միայն հիվանդության պատճառով, այլ նաեւ խորը, անձնական պատճառներով:

“Հարեւանը” պառկած վիճակում շրջվեց ու փորձեց վեր կենալ: Այդ ժամանակ արդեն պարզ եղավ, որ աղջկա աչքերը չէին խաբում: Նրա առջեւ պառկած էր իր հիացմունքի առարկան՝ մարդ, ում օրինակով նա գնաց իրավաբանական ճանապարհով եւ դարձավ հրաշալի մասնագետ:

-Պ... պարոն Դորա՞ն:

Ընկնող ակնոցը բարձրացնելուց հետո միջին տարիքի տղամարդը վերկեցավ, հենվեց սեղանին, հետ տարավ երկար, մոխրագույն մազերը: -Սոյու՞արտ, աչքերիս չեմ հավատում: Ի՞նչ գործ ունես այստեղ: Հավատս չի գալիս, որ այսքան

Ժամանակ անց այստեղ ինձնից բացի կենդանի մարդ կա: Լիդան ցանկացած մոտենալ իր նախկին դասախոսին, սակայն Դորանը, ձեռքը առաջ բերելով, կանգնեցրեց նրան:

- Մոտ չգաս, հիվանդ եմ:

Աղջիկը հետեզնաց դռան մոտ: Հետեւելով տղամարդու աչքերին (որոնք, իմիջիայլոց, ոտքից գլուխ քրքրում էին նրան)՝ Լիդան հիշեց իր ձեռքերում քարացած դանակի մասին ու մի կողմ գցեց այն:

- Պարոն Դորան, դուք ասեցիք, որ երկար ժամանակ է, ինչ այստեղ եք, բայց ես կողքի սենյակում էի հինգ ժամից ոչ ավել:

- Երկար ժամանակը շատ արստրակտ արտահայտություն է, Ստյուարտ, ես այստեղ եմ երեք օր: Երեք անտանելի երկար, դաժան օր, առանց ջրի, հացի ու արտաքին աշխարհի հետ կապվելու որեւէ միջոցի: Խմելու բան ունե՞ս:

Նման ուղիղ հարցից աղջիկը ընկավ վայրկենական շոկի մեջ, հետո գլուխը թափ տվեց ու ցույց տվեց սալորի բրենդիի կիսադատարկ շիշը:

- Ոչ, միայն սա:

- Գրողը տանի, տուր ինձ:

Վերցնելով ակոհույի շիշը՝ պարոնը սկսեց ազահորեն կուլ տալ կոկորդը վառող հեղուկը:

- Հը՛մ, վատը չի:

Լիդան վերցրեց փայտե արձաններից մեկն ու փռվեց վրան: Դորանը հետեւեց նրա օրինակին:

- Սըր, մենք պետք է մի կերպ այստեղից դուրս գանք: Սենյակը ցրեց խռպոտ ծիծաղը, որին հաջորդեց չոր հազը:

-Ահ, իսկ ինձ թվում էր՝ դու սրամիտ աղջիկ ես: Լիդա, ելք չկա: Մենք մինչեւ վերջ մնալու ենք այստեղ, չորանալու ու սովամահ ենք լինելու: Միակ բանը, որը մենք ունենք,- Դորանը բարձրացրեց ձեռքն ու ցույց տվեց բրենդիի շիշը,- սա է:

- Ես հրաժարվում եմ խուճապի մատնվել ու կորցնել հույսս,- Լիդան տեղից վեր կեցավ ու սկսեց քայլել սենյակով մեկ,- ամեն ինչ դեռ կորած չէ: Իսկ եթե դուք, սըր, ավելի խելամիտ գտնվեիք, հիմա էստեղ նստած դատարկաբանության փոխարեն ինձ հետ միասին կմտածեիք մեր հետագա գործողությունները:

Դորանը միայն քմծիծաղ տվեց աղջկա խոսքերին.

- Ե՛վ, ի՞նչ ես առաջարկում:

- Առաջարկում եմ պլան կազմենք:

Լիդան մոտեցավ կաղնու փայտից պահարանին, դույլներից մեկը առանձնացրեց, վերցրեց համարյա վերջացած գծագրական մատիտներից մեկն ու նստեց հատակին:

- Ես գիտեմ այս շենքը: Շինությունը ունի 14 հարկ, պատուհանի տեսարանից կարելի է եզրակացնել, որ մենք 12-րդ ում ենք: Բոլոր դռները փակվել են, միակ դուրս գալու ճանապարհը տանիքն է: Վերելակը բնականաբար ավտոմատ փակվել է, մնում է աստիճաններով բարձրանալ: Տանիքից մեզ կարող են օգնել, միայն մեզ պետք է ուշադրություն գրավող մի բան:

- Զրդեհ,- ակտիվացավ Դորանը,- այստեղ կա փայտե կահույք, կարող եմք վառել:
Ծխից լավ ուշադրություն գրավող բան չկա: Միայն թե ինչո՞վ եմք վառելու:
Կրակայրիչի նույնիսկ նշմար էլ չկա:

Լիդան կանգ առավ եւ ուշադիր նայեց տղամարդու դեմքին.

- Ձեր ակնոցը: Մենք կարող եմք օգտագործել դա որպես խոշորացույց: Արեւի շողը կանցնի ապակիների միջով ու կայրի փայտը:

Տղամարդը հանեց ակնոցն ու շորի ծայրով մաքրեց դրանք:

-Այս մի քանի օրը, ինչ ես այստեղ եմ, մի բան եմ նկատել: Տանիքին կա մասնավոր ուղղաթիռ: Զրդեհի ժամանակ մենք կկարողանանք թռչել դրանով:

-Բայց ես ուղղաթիռ վարել չգիտեմ:

-Ես գիտեմ,- Լիդայի հարցական հայացքին պատասխանելու համար շարունակեց Դորանը,- ուսանողական տարիներին եմ սովորել: Բայց միակ բանը, որ ես կկարողանամ անել, քեզ ուղեկցելն է, ուղղաթիռը դու ես վարելու:

Արեւի մայր մտնելուն մնացել էր մի քանի ժամ, ուստի Լիդան ու պարոն Դորանը որոշեցին անհապաղ սկսել իրենց կազմած ծրագրի իրագործումը: Սենյակներից հանեցին աթոռների մնացորդներն ու պահարանների դռնակները, պատրաստեցին մի քանի թուղթ լավ խարույկի համար ու գնացին դեպի կտուր: Տանիքին հասնելու համար մտում էր երկու հարկ հաղթահարել հին մարմարե աստիճաններով:

13-րդ հարկում ոչինչ չկար: Հարկում տիրում էր ամայություն, չկային սենյակներ, նկարներ, կահույք: Չգիտես, գուցե արտակարգ դրության պատճառով էին հարկը դատարկել, գուցե հարկը միշտ դատարկ էր: 13-րդ հարկից վերեւ գնացող աստիճաններն ու տանիքը բաժանում էր հաստ մետաղե դուռը: Աղջիկը արագ աստիճաններով բարձրանալուց հետո սկսեց անհամբեր քաշել բռնակը:

-Փակ է:

-Հուսահատվելու կարիք չկա, կրակի տաքությունից մետաղը կփափկի եւ մենք հեշտությամբ դուրս կգանք:

Դորանը կրկին սկսեց հազալ:

-Ժամանակը շատ քիչ է, պետք է շտապել: Արեւի շողերը արդեն այստեղ են, որտե՞ղ է ակնոցը:

Լիդան հանեց ակնոցի ապակիները, դատարկ սենյակով մոտեցավ մեծ պատուհանին, ապակին հարմարացրեց այնպես, որ շողը անցնի ուղիղ ապակու միջով ու ընկնի թղթի վրա: Մի պահ աշխարհում կարծես բոլոր շուկները դադարեցին:

-Դե, վառվի՛, վառվի՛:

Հազար ու մի միտք մտավ աղջկա գլուխ, պտտվեց ու դուրս թռավ ականջի ծայրից: Իսկ, եթե ապակին սխալ լինի, իսկ եթե արեւի շողը բավական վառ չլինի՞ թուղթը այրելու համար: Բայց բոլոր վախերն ու կասկածները անհետացան այն ժամանակ, երբ թղթի կտորից սկսեց ծուխ բարձրանալ:

-Այո՛, վառվե՛ց, ստացվե՛ց,- Լիդայի ուրախությանը չափ չկար:

Պարոն Դորանը հաջորդական հազի ալիքը զսպելուց հետո արագացրեց երջանկությունից պարող Լիդային: Թուղթը փայտե աթոռների մնացորդների մեջ զգելով՝ Լիդան նշանով հասկացրեց տղամարդուն հետ գնալ, սպասեց, մինչև փայտի կտորներին կրակը անցնի, վերցրեց կտորված աթոռի վառված ոտիկը ու աստիճաններով վերել բարցրացավ: Հասնելով մետաղյա դռանը, աղջիկը կրակը մոտեցրեց կողպեքին: Ջերմաստիճանի ազդեցության տակ մետաղը կամաց-կամաց հալում ու կաթում էր աստիճանների վրա:

-Հիմա՛:

Պարոն Դորանը հավաքեց մնացած ուժերն ու, ինչքան կարող էր՝ ուժեղ հարվածեց մետաղե դռնակին: Հարվածի ուժից դուռը պոկվեց ամրակներից ու ներս թողեց քամու սառը ալիքները: Ամփոջապես դուրս գալուց հետո նրանք շրջվեցին ներսից դուրս եկող մոխիրի քանակը նայելու համար:

-Վերելում օդը ավելի մաքուր է, չէ՞:

-Թեպետ խարուկը այդքան էլ շատ ժամանակ չէր վառվում, օդում ածխաթթու գազի քանակը բավական էր մեզ երկուսիս խեղդամահ անելու համար: Հաշվի վրա էր ամեն վայրկյանը: Լիդան գլուխը թեքեց եւ հանդիպեց փրկության հույսին: Ծանրակշիռ, վառ ուղղաթիռը վեհանում էր շենքի կտուրին:

-Չգու՞մ ես, Ստյուարտ,- Դորանը մոտեցավ ուղղաթիռի պտուտակներին,- ազատությունը կարծես մեր ձեռքերում է: Ես կնստեմ հետեւում:

Տղամարդը, բարձրանալով ոտքերի մատների վրա, խցկվեց ուղղաթիռը:

-Դե, ի՞նչ ես բերանդ ջուր առել:

Լիդան, համակերպվելով ուղղաթիռը վարելու պարտավորության հետ, բարձրացավ օդաչուի նստավայրին ու գլխին դրեց գվարձալի ականջակալները:

-Ի՞նչ անեմ, սրբ:

-Շատ լավ: Հիմա միացրու շարժիչը, դա այդ մեծ կարմիր կոճակն է:

Լիդան դողացող մատներով սեղմեց կոճակն, ու թռչող սարքի պտուտակները սկսեցին արագ պտտվել՝ աղմուկ ու քամի արձակելով:

-Ապրես, հիմա բռնակը բարձրացրու վերել:

Շարժումների անզգուշությունից ուղղաթիռը հանկարծ կտրուկ վերել թռավ: Անսպասելիությունից չամրագոտված Դորանը վեր թռավ ու գլուխը խփեց առաստաղին:

-Վա՛յ, գրողը տանի՛, հանգիստ: Ավելի մեղմ է պետք, մեղմ:

Լիդան մեղավոր գլուխը որպես համաձայնության նշան տանում-բերում է, այս անգամ ավելի զգուշորեն վերցնելով բռնակը՝ դանդաղ բարձրացնում է վերել:

-Հիասքանչ, իսկ հիմա ուղղությունը պահի դեպի հարավ: Ուղղակի մի փոքր կողք տար բռնակը: Ռադիոյով հաղորդեցին, որ այնտեղ օգնություն կա: Լիդան հնազանդ բռնակը թեքեց, երբ նրա գլխում հայտնվեց մի տարօրինակ գաղափար:

-Պարոն Դորան, ներեցեք, իսկ ձեզ ռադիո որտեղից...

Թոփ նորություններ Սթոխես-Սիթիի կենտրոնային բարձրահարկերից մեկում խոշոր հրդեհ է նկատվել: Արտակարգ իրավիճակի խստացման պատճառով բոլոր բիզնես կենտրոնները փակվել են, ուստի հրդեհի պատճառը մնում է անհայտ: Մեր մասնագետները դուրս են եկել խուզարկումի: Մի քիչ առաջ հայտնի դարձավ, որ հրդեհված շենքի մոտակայքում գտնվել է վթարի ենթարկված ուղղաթիռ: Մանրամասները դեռ հայտնի չեն: